ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի հուլիսի 13-ի թիվ 4 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԴԴ-ԲՄԱՊՁԲ-20/01»

Դատական դեպարտամենտի կարիքների համար սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԲՄԱՊՁԲ-20/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 11.07.2020թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 13.07.2020թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

«Հարգելի՛ Հանձնաժողով,

«ԴԴ-ԲՄԱՊՁԲ-20/01» ծածկագրով ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 10-րդ բաժնով սահմանված է. Որակավորման ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:

Խնդրում եմ պարզաբանել, պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվել է համարվում պատվիրատուի կողմից ապրանքի մատակարարման ընդունման հանձնման ակտերը ստորագրելը, թե՞ ապրանքի երաշխիքային սպասարկման ժամկետի ավարտը , այսինքն՝ որակավորման ապահովումը պետք է ուժի մեջ լինի մինչև ապրանքի հանձնման հաջորդող 20-րդ աշխատանքային օրը, թե՞ երաշխիքային սպասարկման ժամկետի ավարտին հաջորդող 20-րդ աշխատանքային օրը:

Շնորհակալություն:»

Պարզաբանում

*«Որակավորման ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև **պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու օրվան** (հաշվարկում ներառվում է կնքվելիք պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման վերջնաժամկետը, պայմանագրի 5.2 կետով սահմանված պայմանագրի կատարման արդյունքի ընդունման ժամկետը) հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:*

*Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև **կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան** (հաշվարկում ներառվում է կնքվելիք պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման վերջնաժամկետը, պայմանագրի 5.2 կետով սահմանված պայմանագրի կատարման արդյունքի ընդունման ժամկետը, ինչպես նաև պայմանագրի 4.2 կետով ապրանքների համար սահմանված երաշխիքային ժամկետը) հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:»*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԲՄԱՊՁԲ-20/01» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԲՄԱՊՁԲ-20/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: